ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՊՈՒՏԱՏ ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Ինը օր հետո Մոսկվայում իր աշխատանքն է սկսելու ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երկրորդ նստաշրջանը, ուր ինչպես հայտարարվել է պաշտոնապես, քննարկվելու է Ղարաբաղի հարցը։ Պատրա՞ստ ենք մենք, արդյոք, նստաշրջանին։ Ո՞վ է այնտեղ ելույթ ունենալու ամբողջ հայ պատգամավորության անունից։ Ի՞նչ է ասելու։ Չէ՞ որ, ամեն ինչից դատելով, հազիվ մեկ-երկուսին ձայն տան։ Կամ կլինի այնպես, ինչպես եղել է միշտ՝ նախագահողը, ամենապատասխանատու պահին, երբ հարկ կլինի դահլիճին տեղեկացնել իրավիճակի մասին, անհրաժեշտ բացատրություն տալ հարցի վերաբերյալ, կասի, թե ռեգիոնում ամեն բան շատ բարդ է, թե մտածեք երեխաների, կանանց, ծերերի մասին, եկեք ընդհատենք մտքերի փոխանակությունը, և դահլիճը կհամաձայնի այդպիսի կարծիք-առաջարկությանը։ Այնպես որ՝ մեզանից յուրաքանչյուրը պետք է պատրաստ լինի ելույթ ունենալու, Հայկական ԽՍՀ հիսուներեք և Ղարաբաղի հինգ պատգամավորներից յուրաքանչյուրը։ Սակայն ելույթներից մեկը պետք է ընդհանուր լինի։ Այսպես ասած, ընդհանրացված՝ ամենքի անունից։ Մենք չպետք է խրվենք պատմության թավուտները։ Մեզ հիմա այլ բան է հուզում։ Մենք պետք է այլ բան ասենք աշխարհին։ Ի վերջո, ի՞նչ է տեղի ունեցել։ Մի՞թե հարցը պարզ չէ։ Մի՞թե հնարավոր չէ հասկանալ, որ Սումգայիթը ոչ միայն չարի խորհրդանիշն է, այլև տարանջատման փաստն ու գործոնը։ Չի կարելի մի հարթության վրա դնել դահճին ու զոհին։ Ժամանակ է հարկավոր։ Հարյուր, երկու հարյուր կամ մեկ տարի, չգիտեմ։ Իսկ առայժմ պետք է մտածել այն մասին, որ մեր միջև կա Սումգայիթ։ Կա շրջափակում, ինչը խոսում է ոչ թե քաղաքացիական կռիվների մասին, ինչպես սխալմամբ կարծում են ոմանք, այլ ամենաիսկական չհայտարարված պատերազմի։ Եվ ես Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանի ուշադրությանն եմ հանձնում ոչ թե իմ ելույթը, այլ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առաջիկա նստաշրջանում հնչելիք ելույթիս թեզերը, հավատացնելով ձեզ, որ մենք բավականաչափ նյութեր ունենք ու նստաշրջանի աշխատանքի ընթացքում կարող ենք ներկայացնել նորանոր փաստաթղթեր։

Մենք՝ Հայկական ԽՍՀ-ից և Լեռնային Ղարաբաղից ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներս, ինչպես նաև Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավորներս, մեր քաղաքացիական պարտքն ենք համարում վերակառուցման շահերը պաշտպանել բոլոր նրանց ոտնձգություններից, ովքեր հայտարարում են, թե հայկական ինքնավար մարզի հայ բնակչության քաղաքական, ազգային ու սոցիալական բողոքի արտահայտման մեջ մեղավոր են ապրիլյան պլենումի ազդարարած դեմոկրատացումն ու հրապարակայնությունը։ Ըստ էության, նախօրոք մտածված հարված է հասցըվում ինչպես վերակառուցման փրկարար գաղափարին, այնպես էլ նրա նախաձեռնողներին ու կողմնակիցներին։ Հիշեցնելով, որ վերակառուցման ծննդյան օրը պաշտոնապես ընդունված է համարել 1985 թվականի ապրիլի 28-ը, կուզենայի փոքրիկ մեջբերում անել մի փաստաթղթից. «Ահա արդեն երկու տարի է, ինչ մենք, Ղարաբաղի... հայ բնակչությունը, կտրված ենք ներքին ու արտաքին աշխարհից, քանի որ երկաթուղային ճանապարհների և խճուղիների շրջանում տեղավորված մուսուլմանական բնակչությունը ամեն կերպ խոչընդոտում է մեր բոլոր կապերին, և մենք հինավուրց Գանձասարի լեռներում կարող ենք մի կերպ պաշտպանել մեր ֆիզիկական գոյությունը միայն»։ Դժվար թե ձեզնից որևէ մեկը կասկած ունենա, որ ամբողջովին տագնապով լեցուն այս տեքստը գրված է հիմա, այսօր, երբ Ղարաբաղն իրո՛ք կտրված է ներքին ու արտաքին աշխարհից։ Իսկ մեր պայմաններում և մեր, այսպես ասած, սննդի պաշարների պարագայում դըժվար չէ պատկերացնել, թե ինչ է նշանակում կտրված լինել ներքին ու արտաքին աշխարհից, չորս կողմից կրակի թիրախ դարձած կղզի լինել, լինել ամրոց՝ պաշարման դրության մեջ։ Ամեն բան, թըվում է, ճիշտ է։ Բայց այդ տեքստը ղարաբաղցիներն այսօր չեն գրել, այլ 1918 թվականի դեկտեմբերի 12-ին։ Փաստաթուղթն ունի իր անվանումը՝ «Ղարաբաղի... գյուղերի բնակիչների համախոսականը Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ մուսավաթական բանդաների մշտական հարձակումներից իրենց փրկելու խնդրանքով»։

Մի քանի անգամ ինձ վիճակվել է դատողություններ լսել այն մասին, թե, ահա, ապրում էին մարդիկ իրենց համար, չէին տրտնջում, վախ չունեին, արյուն չէին տեսել մինչև վերակառուցումը, ու հանկարծ՝ ա՛ռ քեզ։ Իբր, ինչո՞ւ առաջ այս ամենը չկար։ Ո՛չ Սումգայիթ, ոչ Ֆերգանա, ո՛չ Ուզեն։ Չգիտեմ Ֆերգանայի և Ուզենի հարցում ինչպես, բայց ահա սումգայիթներ Ադրբեջանում եղել են բոլոր յոթանասունմեկ տարիներին։ Երկու տարի մուսավաթների, վաթսունինը տարի խորհրդային իշխանության օրոք։ Յոթանասունմեկ տարվա ընթացքում կուտակված տասնյակ հազարավոր փաստաթղթերը վկայում են հատուցում չստացած անվերջանալի հանցագործությունների, բարբարոսության, վանդալիզմի մասին։

Ասում են, ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի նստաշրջանը, որը որոշում կայացրեց Ադրբեջանի կազմից դուրս գալու վերաբերյալ, անակնկալ, նոնսենս էր մեր իրականության համար։ Եվ դարձյալ մեղքը գցում են վերակառուցման վրա։ Ստիպված ենք, չըմտնելով պատմական մանրամասների մեջ, չբարձրացնելով ճշմարտության տեսակետից անանց այդ էլ անվիճելի՝ այսպես կոչված տարածքի հարցը, մի քանի փաստաթղթեր բերել, որոնք իսպառ ժխտում են բուն միտքն այն մասին, թե ղարաբաղցիների պահանջը ծնվել է սոսկ վերակառուցման թեժ պահին և միայն էքստրեմիստ-նացիոնալիստների գըլուխներում։ Բոլոր մեջբերումները արվում են արխիվային բնագրային նյութերից, նշելով աղբյուրները, որոնք, իմ ելույթի տեքստի հետ միասին, ես կհանձնեմ նստաշրջանի նախագահությանը։ Մի քանի տասնյակ գյուղերի (բերվում են դրանց անունները) բնակիչները, դիմելով Հայաստանի կառավարությանը, խնդրում են «իբրև ցեղակիցներ, առաջիկա կոնֆերանսում միջնորդել մեծ տերությունների ներկայացուցիչների առջև տեղ հասցնելու Ղարաբաղի հայ բնակչությունը Հայկական հանրապետության հետ միավորելու մեր թախանձանքը, ամենևին չթողնել մեզ Ադրբեջանի հանրապետության լծի տակ, հակառակ դեպքում դա դեմ կլինի մեր կամքին, և մենք երբեք ողջ չենք հանձնվի հայ ազգի բըռնաջնջման այդ մասնագետներին»։ Այսօր, ինչպես տեսնում ենք, այն դժբախտ ու միևնույն ժամանակ քաջարի ղարաբաղցիների թոռները արդեն ներկայիս Խորհրդային Հայաստանին են դիմում նույն բառերով և նույն խնդրանքով, միայն թե այս անգամ խոսքը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առաջիկա նստաշրջանի առջև միջնորդելու մասին է։ Ձայներ են լըսվում, թե այն ժամանակից, երբ Ղարաբաղը մտցվեց մուսավաթական, ապա նաև սոցիալիստական ադրբեջանական հանրապետության կազմի մեջ, ղարաբաղցի հայերը երբեք չեն բողոքել իրենց ճակատագրից, ընդ որում՝ դարձյալ ու դարձյալ մեղադրում են վերակառուցումը։ Կբերեմ տարբեր ժամանակների փաստաթղթեր. «Երբ թուրքական զորքերը հարձակվեցին Ալեքսանդրապոլի վրա և մոտեցան Ելիզավետպոլի նահանգին, տեղի թաթարները (այսինքն՝ ադրբեջանցիները-Զ. Բ.) զենքը ձեռքերին ոտքի կանգնեցին, նպատակ ունենալով Ղարաբաղը մաքրել հայերից ու դարձնել Ադրբեջանական հանրապետության բաղկացուցիչ մասը։ Մեր հարևան գյուղերում ադրբեջանցիներն սկսեցին իրար մեջ բաժանել հայոց տները, գեղեցիկ կանանց ու աղջիկներին և նույնիսկ չէին ամաչում մեզ բարձրաձայն ասել այդ մասին»։ Կամ՝ «Ղարաբաղի բնակչությունը պատրաստ է ամեն տեսակի զոհողությունների՝ հանուն ադրբեջանական իշխանությունից ազատման և իրեն հարազատ Հայաստանի հետ միավորման»։

1988 թվականի փետրվարի 28-ին կուսակցության Ասկերանի շրջկոմի նախկին քարտուղար (այժմ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, կուսակցության Մարտունու շրջկոմի առաջին քարտուղար) Վաչագան Գրիգորյանը մի հեռախոսագիր ուղարկեց Երևան, հետևյալ բովանդակությամբ. «Բազմահազարանոց ադրբեջանական ամբոխը՝ զինված հրացաններով, եղաններով, կացիններով, խորտակելով ու այրելով իր ճանապարհին ամեն բան, շարժվում է Աղդամից Ստեփանակերտ։ Բայց հրոսախումբը կանգնեցվեց տեղի բնակիչների կողմից Ասկերանում։ Ադրբեջանի ղեկավարությունը զինված ուժեր է մտցնում Աղդամ և դա այն ժամանակ, երբ մենք չունենք ո՛չ զենք, ո՛չ ֆինանսներ»։ Հեռախոսագիրը Վ. Գրիգորյանը տվել է արդեն վերակառուցման օրոք, որին այսօր ոմանց ձեռնտու է մեղադրել բոլոր մահացու մեղքերի մեջ։ Քանի դեռ ձեր հիշողության մեջ թարմ են շրջկոմի քարտուղարի խոսքերը, լսեցեք մեկ այլ փաստաթղթի տեքստը, որը կազմվել է յոթանասուն տարի առաջ։ Կարծես դրանք նույն ձեռքով են գրված. «Հայ բնակչությունը լսել անգամ չի ուզում Ադրբեջանին ենթարկվելու մասին... Այնինչ կազմակերպված զինվորական ուժ մենք չունենք, ռազմական պաշարները չնչին են, իսկ գլխավորը՝ ֆինանսներ չկան։ Իսկ Ադրբեջանն այժմ զինվորական ուժեր է պատրաստում, զորքեր են մոտ բերվում, զենք է բերվում Աղդամ, մի խոսքով՝ հարձակում է նախապատրաստում։ Դրությունը օրեցօր սպառնալից է դառնում»։ Իսկ վերջերս ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի նախագահության անունից Հայաստանի կոմկուսի Կենտկոմին հղված դիմումի մեջ—ասես ժամանակը կանգ է առել մեր երկրում— դարձյալ խոսվում էր հայկական երկրամասում տագնապալի իրավիճակի մասին, այն մասին, որ Ադրբեջանի ղեկավարությունը միլիցիայի համազգեստ հագած զինված ադրբեջանցիներ է ուղարկում Ղարաբաղի գյուղերը։

Երկար ժամանակ պնդում էին մեզ, թե մեր երկրում մեկընդմիշտ լուծված է ազգային հարցը։ Իբր, բոլշևիզմը վերջ է դրել այն ամենին, ինչ կատարվում էր բոլոր տեսակի բեկերի ու մելիքների ժամանակ։ Կատարյալ կեղծի՛ք էր։ Եվ հենց վերակառուցումը լույս սփռեց այն մութ անցյալի վրա, որի ժամանակ մուսուլմաններն ու քրիստոնյաները ապրում էին, ի դեպ, շատ ավելի լավ, շատ ավելի, այսպես ասած, խաղաղ, քան այժմ։ Ես լսել եմ, թե ինչպես Ղարաբաղում երկրի տարբեր ղեկավարների հետ հանդիպումների ժամանակ Հենրիկ Պողոսյանն ու Ռոբերտ Քոչարյանը պնդում էին, թե այդ ինչո՞ւ են ոմանք կարծում, որ Ղարաբաղի փոքրաթիվ ադրբեջանական բնակչությունը կարող է խտրականության ենթարկվել, եթե մարզը տան Հայաստանին։ Այստեղ ևս հարկ է համեմատություն անցկացնել անցյալի հետ։ Պողոսյանն ու Քոչարյանը կարծես ձայնակցում էին Ղարաբաղում բրիտանական հրամանատարության ներկայացուցիչ, գնդապետ Շատելվորտի հետ իրենց նախնիների գրության տեքստին, որը հարցրել է մելիքների հետնորդներից մեկին. «Ինչպիսի՞ն է ձեր կարծիքը... (պայքարող կողմերի)... բախման վերաբերյալ»։ Եվ անզիջացում պատասխանել են. «Մելիքների օրոք հայերն ու մուսուլմանները համերաշխ են ապրել։ Կարծելի է նաև առանց Ադրբեջանի այժմ այդպիսի կյանք ստեղծել»։ Ճիշտ է, ավելացնենք մեր կողմից, մելիքների օրոք ադրբեջանցիները չորս տոկոս էին կազմում, իսկ այսօր՝ գրեթե քսան։

Վերջին ժամանակներս որքա՜ն սուր վեճեր են եղել, թե կարելի է այսպես արտահայտվել, ամենաքաղաքակիրթ բառերից մեկի՝ «ինքնորոշման» շուրջ։ Որպես կանոն, այդ տերմինը մենք կապում ենք ազգային քաղաքականության լենինյան տեսության հետ։ Սակայն դեռևս 1919 թվականի մայիսի 5-ին Ղարաբաղի Ազգային խորհուրդը (ինչպես տեսնում եք, այն ժամանակ էլ կոչվում էր Ազգային խորհուրդ) ազդարարեց. «Հայ ժողովուրդը հայտարարում է, որ սրբորեն հարգում է յուրաքանչյուր ժողովրդի ինքնորոշման իրավունքը, բայց նույնպիսի վերաբերմունք է պահանջում նաև իր նկատմամբ։ Հայկական Ղարաբաղը ողջունում է Ադրբեջանի ինքնորոշումը և պատրաստ է նրա հետ միասին բարիդրացիորեն աշխատել հանուն երկու ժողովուրդների բարօրության և քաղաքակրթության։ Բայց երբ Ադրբեջանը ինքնորոշման իրավունքը ընդունելի է համարում միայն իր համար, ապա այդպիսի մտածելակերպի դեմ պետք է և անհրաժեշտ է բողոքել բոլոր միջոցներով»։

Այնպես որ, ինչպես տեսնում ենք, ազգի փրկության հարցերը ղարաբաղցիները բարձրացրել են վերակառուցումից շատ ու շատ առաջ։ Եվ ղարաբաղցիները թույլ չեն տա վերակառուցումը մեղադրել մի բանում, ինչում ոչ մի մեղք չունի։ Այսօր բաղիրովների ու ալիևների սանձուները ճամարտակում են այն մասին, թե թող փորձեին հայերը Ղարաբաղի հարցը բարձրացնել Ստալինի օրոք։ Դրանով իսկ դարձյալ աշխատում են վատաբանել վերակառուցումը։ Ամենքին կարող եմ հավաստիացնել, որ այդ հարցը դրվել է ամեն տարի, ամեն ամիս, ամեն օր՝ բոլոր յոթանասուն տարիներին։ Եվ ամենից շատ՝ հենց Ստալինի՛ օրոք։ Այո, դահճի ձեռքով զոհվում էին Հայաստանի բազմաթիվ զավակները, բայց Ղարաբաղի համար մարտնչողների նոր շարքերը համալրում էին նոր մարդիկ, նոր սերունդներ։ Արդեն պատերազմից հետո, երբ «բոլոր ժողովուրդների առաջնորդը» դարձավ «տեր աստված», Հայաստանի կոմկուսի Կենտկոմի այն ժամանակվա առաջին քարտուղար Գրիգորի Արտեմիչ Հարությունովը նամակ գրեց Ստալինին, ուր ասվում էր, որ, ելնելով Լեռնային Ղարաբաղի և Խորհրդային Հայաստանի բնակչության ցանկությունից, հարց է մտցվում ՀԿՊ(բ) Կենտկոմ և միութենական կառավարություն՝ մարզը իբրև վարչական Ղարաբաղյան մարզ Հայաստանի կազմի մեջ մտնելու մասին։ Գրիգորի Արտեմիչը, արհամարհելով վախն ու թույլամտությունը, ուղղակի հայտարարեց, որ միայն այդպիսի լուծումը կնպաստի հայկական մարզի զարգացմանը։

Մեզ թվում է, թե միայն հիմա է մամուլը աչառու, միակողմանի լուսաբանում ռեգիոնի իրադարձությունները։ Մամուլը ինքնին մեղավոր չէ։ Բոլոր ժամանակներում այն օգտագործել են իբրև զենք։ Մեր վերակառուցումից վաթսունհինգ տարի առաջ պաշտոնական փաստաթղթերից մեկում ասվում է. «Ադրբեջանցիները համառորեն և հմտորեն մամուլով սկզբում հող ու հասարակական կարծիք են նախապատրաստում իրենց գործողությունների համար, հետո միայն գործի անցնում...»։

Փախստականները։ Սարսափելի մի երևույթ։ Հատկապես, եթե նկատի ունենանք, որ հայերին դուրս են քշում ոչ թե պարզապես իրենց բնակության, այսպես ասած, գրանցման վայրից, այլ հայրենիքից, ուր նրանց նախնիները իրենց հողն են մշակել հազարավոր տարիներ։ Այստեղ ևս մենք բազմիցս լսել ենք, թե ինչպես են Նինա Անդրեևայի կողմնակիցները մեղադրում վերակառուցումը։ Իբր, վերակառուցումից առաջ այդ երևույթը չի եղել։ Կուզեինք իմանալ, իսկ որտե՞ղ են Նախիջևանի նախարենիկները։ Թեև Ագուլիսից ու Ազնաբերդից Երևան տեղափոխվելով, նրանք արդեն փախստականներ չէին կոչվում։ Այդ երևույթը ռեգիոնում նըկատվում էր նաև առաջ։ Երկո՛ւ կողմից։ Քանի որ, հատկապես նախկինում, այսպես կոչված, ադրբեջանական գործոնին պատասխանում էին հայկական գործոնով։ Այստեղ կարևոր է խոսել փախստականների տեղավորման քաղաքականության մասին։ Այսօր մենք գիտենք, որ Հայաստանից ադրբեջանցի փախստականներին (նրանց զգալի մասը, ի դեպ, իր տունը թողել է երկրաշարժից հետո և տարածվող այն լուրերից վախենալով, թե թուրքերն ուր-որ է կպայթեցնեն ատոմակայանը) տեղավորվում են, այսպես ասած, ընտրովի, ազգային ստրատեգիայի հաշվառմամբ։ Շուշիում և Խոջալուում։ Եվ կարծում եք դա նո՞ր քաղաքականություն է, վերակառուցման ծնո՞ւնդ, ինչպես ասում են ոմանք։ Ամենևի՛ն։ Դեռ քսանական թվականների սկզբին Հայաստանից ադրբեջանցի փախստականներին տեղավորում էին միայն հայկական բնակավայրերում։ Ներեցեք, բայց դարձյալ դիմելու եմ փաստաթղթի օգնությանը. «Երևանի նահանգի և մասամբ Զանգեզուրի ադրբեջանցի փախստականներին ադրբեջանական կառավարությունը ուղղակի մտադրությամբ տեղավորում է այն վայրերում, ուր շատ հայեր են բնակվում, ինչպես օրինակ Ելիզավետպոլում, Շուշիում, Եվլախում և այլուր»։

Այնպես որ՝ ուզում ենք երեսներին շպրտել բոլոր նրանց, ովքեր գտնում են, թե չկա ո՛չ Ղարաբաղի պրոբլեմ, ո՛չ ցավ, ո՛չ ողբերգություն, այլ կան միայն վերակառուցման բացերը։ Վերջ տվեք։ Հանգի՛ստ թողեք վերակառուցումը։ Մի ծակեք միակ փրկօղակը։ Երկիրը կխորտակվի։ Եվ կան ուժեր, որոնք շատ են դա ցանկանում։ Նրանք շատ լավ գիտեն, որ այսօր երկրի փրկությունն սկսվում է Ղարաբաղի գործնական փրկությունից։ Նրանք շատ լավ գիտեն, որ թե՛ այսօր՝ վերակառուցման թեժ պահին, թե՛ յոթանասուն տարի առաջ ռեգիոնում նույն նպատակներն են հետամտել։ Այսօր կոչեր են հնչում. «Մաքրենք Ադրբեջանը վերջին հայից և որպես սուվերեն պետություն դուրս գանք ԽՍՀՄ-ից՝ դեպի արյան, կրոնի, լեզվի մեր եղբայրները»։ Յոթանասուն տարի առաջ նույն բանն էր ասվում. «Ադրբեջանը նորից նպատակ է դրել ինչ գնով էլ լինի Ելիզավետպոլի նահանգի լեռնային մասը մաքրել հայերից, նրանց տեղը մուսուլմաններին բնակեցնելու համար... զինաթափել Ղարաբաղը, և ապա իր իշխանությանը ենթարկել նաև Զանգեզուրը։ Ադրբեջանական կառավարությունը... լարում է իր բոլոր ուժերը՝ առաջադրված նպատակն անմիջապես իրագործելու համար, որի վերջնական արդյունքը դարձյալ համարում է Ադրբեջանի անհապաղ միացումը Թուրքիային՝ Նախիջևանի միջոցով»։ Ինչպես գիտեք, նա արդեն հասել է իր այդ նպատակին։ [illegible] ժամանակ վերջնիս տարածքը...»։

Հետագայում նրանցից շատերը, ոգեշնչվելով դահիճ Միրջաֆար Բաղիրովի կողմից, դարձան հանրապետության ակտիվ ղեկավարներ, նախկինի պես հրահանգներ ստանալով Թուրքիայից։ Յոթանասուն տարվա ընթացքում ոչինչ չի փոխվել մեզ մոտ ռեգիոնում։ Միայն մեկ միլիոնից էլ պակաս նախկին (ըստ Լենինի) կովկասյան թաթարներից աճեցին արդեն յոթ միլիոն ադրբեջանցիներ։ Ու, թերևս, փոքր-ինչ փոխվել են բռնության եղանակներն ու միջոցները։ Ավելի հրեշավոր են դարձել։ Սումգայիթը դրա հաստատումն է։ Սումգայիթը, որ երկնքից չի ընկել։ Սումգայիթը, որ արդեն ցույց տըվեց, թե ղարաբաղցիներն իրավացի էին իրենց բողոքի հեղափոխական արտահայտման մեջ։ Դեռ վաթսունական թվականների կեսերին Ալիևը կազմակերպեց «իր» Սումգայիթը Ստեփանակերտում, որի հետևանքով սպանվեցին տասնյակ մարդիկ, իսկ տասներեք հայ նշանավոր գործիչներ (այդ թվում նաև Արկադի Մանուչարովը) վտարվեցին մարզից։ Եվ այդ ամենն Ալիևը անում էր անպատիժ, օգտվելով Ադրբեջանի այն ժամանակվա պետանվտանգության կոմիտեի նախագահ, Բրեժնևի մոտ ազգական Ցվիգունի ծառայություններից։ Այն նույն Ցվիգունի, որը պատգամավոր ընտրվեց ոչ այլ տեղից, քան հենց Ղարաբաղից, և որը Բերիայից հետո դարձավ Ալիևի հոգևոր հայրը։ Եվ պետք չէր զարմանալ թուրք պանթուրքիստի ու վերակառուցման թշնամու ֆանտաստիկ կարիերայի վրա։ Պատահական չէ, որ «Զնամյա» ամսագիրը վերջերս գրեց. «Իրականությունից այնքան էլ հեռու չէ այն ենթադրությունը, թե առաջին հայկական ջարդերը Ադրբեջանում հրահրված են եղել Ադրբեջանի պետանվտանգության կոմիտեի նախկին ղեկավար Հ. Ա. Ալիևի գլխավորած տեղական մաֆիայի կողմից, այն հաշվով, որ անելանելի իրավիճակ ստեղծեն Գորբաչովի համար»։

Հայերն իրենց անհամաձայնությունն են հայտնում Միխայիլ Սերգեևիչին այն առթիվ, թե զորքերը Սումգայիթում ուշացել են ընդամենը երեք-չորս ժամ... Զինվորական մասնագետներից ես տեղեկացել եմ ուշացման ժամկետների մասին։ Պարզվեց, որ զորքերը երեք-չորս ժամ ուշացել են այն բանից հետո, երբ հրաման են ստացել սանձելու բարբարոսներին ու բռնավորներին։ Այդ դեպքում հարցը պետք է դրվի այլ կերպ. ինչո՞ւ հայերին փրկելու հրամանը եկել է միայն երրորդ օրը և ինչո՞ւ Սումգայիթի համար մինչև օրս պատասխանատվություն չեն կրում Ալիևը, Բաղիրովը, Սեիդովը, Օրուջևը և ցեղասպանության բոլոր անմիջական կազմակերպիչները։ [illegible] Շուշին ու Բաղվից, Գանձակից ու Խանլարից, Դաշքեսանից ու ամբողջ Գարդմանից հետո. և այդ ամենից հետո պահանջում են, որ, հասկանո՞ւմ եք, հանրապետությունների ղեկավարները թող ձեռք մեկնեն միմյանց։ Իսկ ժողովուրդնե՞րը ինչպես... Մենք ինչպե՞ս նայենք մորաքույր Անահիտի աչքերին, որի առջև բռնաբարել են իր երկու թոռնուհիներին ու ողջ-ողջ այրել։ Ի՞նչ անենք Մելքումյանների ընտանիքի մասին այրող հիշողության հետ։ Մայրը, հայրը, աղջիկը, երկու տղան՝ բոլորը գազանաբար տանջահար են եղել 1915 թվականի սցենարով։ Ու բոլորը զոհվել են։

Սումգայիթով ու շրջափակմամբ ադրբեջանական ղեկավարությունը ստորագրել է իր դատավճիռը։ Սումգայիթն ու շրջափակումը կազմակերպելու ընդունակ մարդիկ ամբողջ աշխարհի առջև այսօր ցույց են տվել, որ իրենք բարոյական իրավունք չունեն ղեկավարելու Արցախը։ Իսկ բուն շրջափակումը, Խորհրդային Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի ու մարշալ Բաղրամյանի հուշարձանների պղծումն ու ոչնչացումը, աղետի գոտի բեռներ տանող երկաթուղային շարակազմերի ջախջախումը, իհարկե, չեն խոսում ո՛չ Ադրբեջանի ուժի, ո՛չ էլ տխրահռչակ ադրբեջանական գործոնի մ ա ս ի ն։ Դրանք՝ խոսում են սոսկ մեր ոչ իրավական պետության թուլության մասին, որի սոցիալական ու քաղաքական ախտորոշումը տըվել է վերակառուցումը։ Այն, ինչ այժմ կատարվում է երկրում, անպայման կատարվելու էր մոտավորապես երկու հազար թվականի սահմանագծին ու առանց որևէ վերակառուցման։ Բայց այն ժամանակ բոլոր պրոցեսներն անդառնալի կլինեին։ Այնպես որ՝ ապագան ըստ արժանվույն կգնահատի վերակառուցման մեծ դերը, որն իր ճակատագիրը սերտորեն կապել է Ղարաբաղի ճակատագրի հետ։

Իսկ այսօր դաժան շրջափակման, պաշարման իրավիճակի մեջ գտնվող Արցախի ճակատագիրը շատ է հիշեցնում Մուսալեռան ճակատագիրը։ Մուսալեռցու նման ղարաբաղցին ևս այսօր չի ուզենա վճռորոշ գոտեմարտի բարձունքից իջնել մինչև ստրկության վիճակը, սպասելով նոր ողորմածության։ Մեծն Ֆրանց Վերֆելն իր նշանավոր գրքում բերում է հնագույն ասացվածքի բառերը. «Հայ լինել անհնար է»։ Եվ անմիջապես էլ շարունակում. «Միանգամայն ճիշտ է։ Բայց բոլոր անհնարինությունների հետ հաշիվները մաքրված են»։

Ներկայումս մի բանով են միայն ղարաբաղցիները տարբերվում մուսալեռցիներից։ Նրանք հույս չունեն, թե խռովարար կղզի, ազատության կղզի դարձած Արցախի ափերը [illegible] հայերին փրկելու համար, ինչպես քաջարի ու լեռնցխոր մուսալեռցիներին փրկեցին ֆրանսիական «Ժաննա դ'Արկ» և «Գիշեն» ռազմանավերը։ Միակ ճամփան, որ այսօր կարող է փրկել Արցախ աշխարհը, «Վերակառուցումն» է։ Եվ [illegible] է, որ վերակառուցման կարիք ունի։ Այդ մասին պետք է հիշի ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը, որին այսօր ապավինում է Արցախը, [illegible] է նաև վերակառուցման ճակատագիրը, [illegible]



բարեկամության» պատուհաններ են փայլում «մեծ դատամիջոցի»